Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 4

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2020-2021 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց նիստի

ք.Երևան 11 դեկտեմբերի 2020թ.

Օրակարգում՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա.Ս. Սաղյանի տարեկան հաշվետվությունը:

Նիստը նախագահելու համար առաջարկվեց Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանի, իսկ որպես քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայանի թեկնածությունները:

Լսեցին՝ Նիստի նախագահը ձայնը տվեց Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Աշոտ Սերոբի Սաղյանին, ով մանրամասն ներկայացրեց 2019-2020 ուսումնական տարում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է) և պատասխանեց ներկաների հարցերին:

Ելույթ ունեցան՝ Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի անդամներ բ.գ.դ., պրոֆեսոր Է. Սեկոյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ք.գ.թ. Ս. Ափոյանը, ուսանող Անի Խաչատրյանը, ովքեր իրենց գնահատանքի և գովասանքի խոսքերն ուղղեցին ակադեմիկոս Ա. Սաղյանին: Ելույթ ունեցողները հատկապես կարևորեցին այն հանգամանքը, որ տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանը ջանք ու եռանդ չի խնայում Ֆարմացիայի ինստիտուտի շարունակական զարգացման և աշխատակիցներին մշտապես որգևորելու և լավագույն օրինակ ծառայելու համար: Դրա վառ վկայությունն են հանդիսանում ինստիտուտում նոր կազմավորվող

«Դեղապատրաստուկների որակի հսկման և մոնիթորինգի» կենտրոնը և նոր մագիստրոսական ծրագրերը, որոնք հնարավորություն կընձեռեն պատրաստելու միջազգային չափորոշիչներին համապատասխան բարձր որակավորում ունեցող մասնագետներ։

Ելույթ ունեցողներն առաջարկեցին բավարար գնահատել Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանի տարեկան հաշվետվությունը։

Որոշեցին ՝ (միաձայն) հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար Ա. Սաղյանի հաշվետվությունը և այն գնահատել բավարար։

Նիստի նախագահ՝

Կենսաբժշկագիտության ամբիոնի

վարիչ, բ.գ.դ Ռ.Ա. Հովհաննեսյան

Գիտական քարտուղար, ք.գ.թ.՝ Ա. Ս. Դադայան